ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԿԻՑ ԳՈՐԾՈՂ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

ՀՀ վարչապետին կից կանանց խորհուրդ

Խորհրդի նիստեր

Կանանց խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով: Դրանք գումարվում են երեք ամիսը մեկ: Կարող են գումարվել նաեւ արտահերթ նիստեր՝ խորհուրդը համակարգողի նախաձեռնությամբ եւ անդամների առնվազն 1/3-ի առաջարկությամբ: Այդ ընթացքում ակտիվորեն աշխատում են խորհրդի կազմում գործող աշխատանքային խմբերը: Նիստերը նախագահում է ՀՀ վարչապետը:

2001թ. հունվարի 26-ին տեղի է ունեցել խորհրդի առաջին նիստը՝ վարչապետի նախագահությամբ: Կարեւորելով խորհրդի ստեղծման նպատակը՝ վարչապետը փաստել է, որ խորհուրդն իր գործունեությամբ պետք է կարողանա հասնել նրան, որ թե պետության, թե հասարակության մեջ բարձրանա կնոջ դերը եւ ըստ արժանվույն գնահատվեն կնոջ կազմակերպչական եւ ստեղծագործական ունակությունները: Վարչապետը միաժամանակ առաջարկել է կանանց հիմնախնդիրները չառանձնացնել երկրի ընդհանուր, այդ թվում եւ տղամարդկանց խնդիրներից, քանզի այսօր պակաս ծանր վիճակում չէ նաեւ տղամարդը. նա աշխատանք չունի եւ ընտանիքի նկատմամբ պատասխանատվություն ունենալով՝ հաճախ հոգեբանական ծանր կացության մեջ է հայտնվում:

Ողջունելով վարչապետի նախաձեռնությունը, խորհրդի անդամները փաստել են, որ տարիներ շարունակ խոսվել է կանանց հիմնախնդիրների մասին, սակայն գործնականում ոչինչ չի արվել: Ըստ նրանց, այժմ այս մարմինն իրենց հնարավորություն կտա խնդիրների մասին անընդհատ խոսելուց հետո, անցնել դրանց լուծման մեխանիզմների մշակմանը եւ կառավարության միջոցով՝ դրանց իրագործմանը:

Որոշակի խմբագրական առաջարկներով նիստում հաստատվել է խորհրդի կանոնադրությունը, ամրագրվել են խորհրդի խնդիրներն ու գործառույթները:

Վարչապետը հանձնարարել է նախարարություններին, գերատեսչություններին մեկ շաբաթվա ընթացքում խորհրդին ներկայացնել, թե 2001թ. իրենց ծրագրերում կանանց հիմնահարցերի հետ կապված ինչպիսի խնդիրներ են նախատեսում ներառել՝ միաժամանակ առաջարկելով խորհրդի անդամներին՝ երկշաբաթյա ժամկետում ծանոթանալ ստացված պատկերին, ամբողջացնել այն եւ առաջարկել խնդիրների լուծման մեխանիզմներ:

Խորհրդի երկրորդ նիստը տեղի է ունեցել 2001թ. փետրվարին: Քննարկվել են նախորդ նիստում տրված հանձնարարականների՝ ՀՀ վարչապետին կից կանանց խորհրդի կանոնադրության 6-րդ կետի (այն վերաբերում է խորհրդի գործառույթներին) վերաբերյալ առաջարկությունները, ինչպես նաեւ ընթացիկ հարցեր:

Խորհուրդը հաստատել է այն առաջարկները, հետագա նիստերում քննարկման ենթակա հարցերի ցանկը, որոնք ներառում են ամենատարբեր ոլորտներ՝ կրթական, առողջապահական, սոցիալական, մշակութային եւ այլն:

Վարչապետի առաջարկով խորհուրդը ձեւավորել է նաեւ աշխատանքային խմբեր, որոնք պետք է նիստից-նիստ ընկած ժամանակահատվածում ակտիվ աշխատեն: Ըստ այդմ, ստեղծվել է 4 աշխատանքային խումբ՝ մշակութային, կրթության, սոցիալական-առողջապահական, պետական մարմինների եւ հասարակական կազմակերպությունների հետ փոխհարաբերությունների:

Վարչապետը հանձնարարել է խորհրդի անդամների կողմից առաջարկված հարցերը քննարկել աշխատանքային խմբերում եւ ներկայացնել խորհրդի նիստի քննարկմանը:

Խորհրդի հաջորդ նիստը տեղի է ունեցել 2001թ. մարտ ամսին, ուր քննարկվել են աշխատանքային խմբերում կատարվող աշախատանքների ընթացքը:

Խմբերի ղեկավարները ներկայացրել են ենթանիստերում կատարած իրենց աշխատանքները, ոլորտային ծրագրերը:

Նիստում քննարկվել է նաեւ Գարեգին Նժդեհի 115-ամյակի հոբելյանին կանանց խորհրդի մասնակցության խնդիրը: Հանձնարարական է տրվել առաջարկներ ներկայացնել հոբելյանը նշելու հետ կապած միջոցառումների մասին:

2001թ. սեպտեմբերի 19-ին տեղի է ունեցել խորհրդի չորրորդ նիստը:

Քննարկվել են կրթության, մշակույթի, սոցիալ-առողջապահական, ինչպես նաեւ պետական կառավարման մարմինների եւ հասարակական կազմակերպությունների փոխհարաբերություններն ուսումնասիրող աշխատանքային խմբերի ներկայացրած առաջարկներն ու միջոցառումների ցանկը: Դրանք ներառում էին ինչպես հրատապ, այնպես էլ հեռանկարային խնդիրներ, որոնք նպատակ ունեն վեր հանել կանանց հիմնահարցերը, ամրապնդել կնոջ դերը երկրի հասարակական-քաղաքական կյանքում:

Կրթության հարցերով աշխատանքային խմբի առաջարկները հիմնականում վերաբերում էին այս ոլորտի մատչելիության ապահովման ուղղությամբ կատարվելիք քայլերին եւ կին-մանկավարժների հիմնահարցերին: Առաջարկ եղավ հոկտեմբերի առաջին կիրակին՝ ուսուցչի օրը, համարել պետական տոն: Խնդրի առնչությամբ վարչապետը համապատասխան մարմիններին հանձնարարեց պատրաստել կառավարության որոշման նախագիծ եւ առաջիկա նիստերից մեկում ներկայացնել հաստատման: Սեպտեմբերի 27-ի նիստում կառավարությունը հաստատեց որոշումը եւ, փաստորեն, վարչապետին կից կանանց խորհրդի նախաձեռնությամբ հոկտեմբերի առաջին կիրակին դարձավ պետականորեն նշվող տոն:

Առաջարկվել է նաեւ ուսումնասիրել ֆիզկուլտուրայի եւ սպորտի դրվածքը դպրոցներում եւ մարզադպրոցներում, ինչպես նաեւ ուսումնական հաստատություններում ուսուցիչների եւ դաստիարակների առողջական վիճակի հետ կապված հարցերի դրվածքը:

Մշակույթի ոլորտի կանանց վիճակի բարելավման եւ մտավորական կանանց հիմնահարցերը ուշադրության կենտրոնում պահելու համար մշակույթի աշխատանքային խումբը նախատեսել է գիտաժողովի, կանանց ստեղծագործությունների մարզային եւ հանրապետական փառատոնների անցկացում: Կառավարության ինտերնետային էջում առաջարկվել է ստեղծել կին գործիչների էջ, ինչպես նաեւ մանրամասն ներկայացնել վարչապետին կից կանանց խորհրդի աշխատանքները: Նախատեսվում է անցկացնել նաեւ կլոր սեղան՝ «Կինը եւ մշակույթը» թեմայով, ինչպես նաեւ մշակութային գործարարության զարգացման նպատակով ոլորտի կանանց արվեստի մենեջմենտի դասընթացներ:

Շահագրգիռ քննարկման են արժանացել սոցիալ-առողջապահական աշխատանքային խմբի ներկայացրած կանանց զբաղվածության, ինչպես նաեւ կին-հաշմանդամներին հասարակությանն ինտեգրման, կին-ձեռներեցների աջակցության հիմնախնդիրները: Առաջարկված միջոցառումների շրջանակներում կկազմակերպվեն բիզնես-դասընթացներ, կին-ձեռներեցների իրավախորհրդատվություն՝ փոքր, միջին եւ ընտանեկան բիզնես կազմակերպելու համար: Վարչապետի առաջարկությամբ այդ ծրագրի մեջ ներառվել են կառավարության կողմից գերակա համարված բարձր տեխնոլոգիաների ոլորտում կին մասնագետների հնարավորությունների օգտագործման եւ վերարտակավորման առաջնահերթությունները:

Վարչապետի հաջորդ հանձնարարականն առնչվել է տեղական ինքնակառավարման մարմիններին. վերջիններս մարզերում որոշակի միջոցառումներ պետք է իրականացնեն՝ կանանց իրավական օգնություն եւ խորհրդատվություն ցուցաբերելու գործում:

Սեպտեմբերյան այդ նիստում, վարչապետ Անդրանիկ Մարգարյանը կարեւորել է նախանշված ծրագրերը եւ հիմնախնդիրները տեսականից գործնական հարթություն տեղեփոխելու անհրաժեշտությունը, միջոցառումների իրականացման հստակ մեխանիզմների եւ ժամանակացույցի առկայությունը, պետբյուջեից բացի ֆինանսական այլընտրանքային աղբյուրների ամրագրումը, ինչպես նաեւ աշխատանքների իրականացման հրապարակայնության ապահովումը:

Կանանց խորհրդի 2002թ. առաջին նիստը տեղի է ունեցել փետրվարին:

Խորհրդի աշխատանքային խմբերի նախորդ տարվա աշխատանքների հաշվետվությունները գնահատվել է բավարար: Քննության է առնվել հանրակրթությունից դուրս մնացած երեխաներին ուսումնական դասընթացում ներգրավելու եւ 1-3-րդ դասարանների աշակերտներին օրական անվճար սննդով ապահովելու խնդիրները, եւ հանձնարարվել է անհրաժեշտության դեպքում գործող մեխանիզմների կատարելագործման առաջարկություններ ներկայացնել: Քննարկվել են Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի 80-ամյակին եւ ՀՀ Նկարիչների միության 70-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումներին աջակցելու, ինչպես նաեւ ՀՀ դիզայներների միությանը տարածք հատկացնելու հարցերը: Հանձնարարվել է ՀՀ կառավարություն ներկայացնել »Հայաստանի Հանրապետության 2002-2005թթ. կանանց վիճակի բարելավման եւ հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագիրը հաստատելու մասին« ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Քննության առարկա է դարձել կինոէկրաններին ցուցադրվող ու հեռուստատեսությամբ հեռարձակվող էրոտիկ ֆիլմերի ցուցադրման հարցը:

2002թ. նոյեմբերին տեղի ունեցած նիստը քննարկել է Խորհրդի սոցիալ-առողջապահական աշխատանքային խմբի 2002թ. 3-րդ եռամսյակի աշխատանքային պլանը՝ դրա կատարումը համարելով բավարար: Որոշվել է ՀՀ մանկապարտեզների դաստիարակների եւ դպրոցների ուսուցիչների առողջական քննության ու բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը նախատեսել պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության 2003թ. ծավալներում:

Քննարկվել է »Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին« ՄԱԿ-ի կոնվենցիայի հետ ՀՀ-ում առկա իրավիճակի անհամապատասխանությունը: Առաջարկվել է ներկայացնել այս ոլորտում կատարված եւ նախատեսվող աշխատանքները, դրանցում ներգրավել Կանանց խորհրդի անդամներին եւ ՀՀ շահագրգիռ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին:

2002թ. դեկտեմբերին կայացած նիստը լսել է Խորհրդի աշխատանքային խմբերի 2002թ. հաշվետվությունները եւ հավանություն տվել կատարված աշխատանքներին: Որոշվել է 2003թ. մշակութային միջոցառումների ծրագրերի համար նախատեսված միջոցների հատկացնել »Կին-մշակույթ-խաղաղություն« հանրապետական փառատոնի եզրափակիչ փուլի իրականացման համար: Նախատեսվել է ստեղծել »Հայ կին արվեստագետներ« ինտերնետային էջ եւ պատրաստել դրա համար անհրաժեշտ տեղեկատվական բանկ: Հանձնարարվել է ապահովել »Հայաստանի Հանրապետության կանանց վիճակի բարելավման եւ հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագիրը« մշակող միջգերատեսչական հանձնաժողովի գործունեության հրապարակայնությունը:

2003թ. փետրվարին տեղի ունեցած նիստը կազմակերպական հարցերի շրջանակներում որոշել է աշխատանքային խմբի ղեկավարներ ընտրել հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին, ստեղծել Խորհրդի »Գործարարությանն աջակցող« նոր աշխատանքային խումբ, »Սոցիալ-առողջապահական« աշխատանքային խումբը տրոհել երկու մասի՝ »Սոցիալական« եւ »Առողջապահական« եւ ներկայացնել 2003թ. աշխատանքային պլանները: Հանձնարարվել է »Հայաստանի Հանրապետության կանանց վիճակի բարելավման եւ հասարակության մեջ նրանց դերի բարձրացման

ազգային ծրագիրը« մշակող միջգերատեսչական հանձնաժողովի գործունեության հրապարակայնությունն ապահովող մեխանիզմներ առաջարկել: Հանձնարարվել է նաեւ կազմակերպել հանրակրթական դպրոցների 1-3-րդ դասարանների աշակերտներին փուլ առ փուլ սննդով ապահովումը՝ առաջին փուլում ընդգրկելով սահմանամերձ շրջանների, երկրորդում՝ բարձր լեռնային շրջանների եւ երրորդում՝ աղետի գոտու առաջին դասարանցիներին:

2003թ. ապրիլին կայացած նիստը կրկին անդրադարձել է աշխատանքային խմբերի պլաններին: Հանձնարարվել է աշխատանքային խմբի ղեկավարներին առաջարկություններ ներկայացնել, ամփոփել դրանք՝ նշելով ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները, կատարման կոնկրետ ժամկետները, ակնկալվող արդյունքները եւ ներկայացնել դրանք Խորհրդին:

2003թ. հուլիսին տեղի ունեցած նիստը քննարկել է աշխատանքային խմբերի պլանների նախագծերը եւ հիմնականում հավանություն տվել դրանց՝ առաջարկելով համապատասխան լրամշակումներ կատարել: Լսվել եւ ի գիտություն է ընդունվել »Հայաստանի Հանրապետության կանանց վիճակի բարելավման եւ հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագրի« մշակման ընթացքի մասին տրված տեղեկատվությունը:

2003թ. վերջին նիստը քննարկել է »Հայաստանի Հանրապետությունում 2004-2010թթ. կանանց վիճակի բարելավման եւ հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագրի« նախագիծը: Հանձնարարվել է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությանը՝ ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության հետ մեկտեղ քննարկել ծարգրի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափի, աղբյուրների եւ դրանց կատարման պատասխանատուների, ինչպես նաեւ աշխատանքներ տանել ծրագրի 2005-2007թթ. միջոցառումները ՀՀ կառավարության 2005-2007թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերում ներառելու հարցը:

Կանանց խորհրդի 2002թ. առաջին նիստը տեղի է ունեցել փետրվարին:

Խորհրդի աշխատանքային խմբերի նախորդ տարվա աշխատանքների հաշվետվությունները գնահատվել է բավարար: Քննության է առնվել հանրակրթությունից դուրս մնացած երեխաներին ուսումնական դասընթացում ներգրավելու եւ 1-3-րդ դասարանների աշակերտներին օրական անվճար սննդով ապահովելու խնդիրները, եւ հանձնարարվել է անհրաժեշտության դեպքում գործող մեխանիզմների կատարելագործման առաջարկություններ ներկայացնել: Քննարկվել են Գ. Սունդուկյանի անվան ակադեմիական թատրոնի 80-ամյակին եւ ՀՀ Նկարիչների միության 70-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումներին աջակցելու, ինչպես նաեւ ՀՀ դիզայներների միությանը տարածք հատկացնելու հարցերը: Հանձնարարվել է ՀՀ կառավարություն ներկայացնել »Հայաստանի Հանրապետության 2002-2005թթ. կանանց վիճակի բարելավման եւ հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագիրը հաստատելու մասին« ՀՀ կառավարության որոշման նախագիծը: Քննության առարկա է դարձել կինոէկրաններին ցուցադրվող ու հեռուստատեսությամբ հեռարձակվող էրոտիկ ֆիլմերի ցուցադրման հարցը:

2002թ. նոյեմբերին տեղի ունեցած նիստը քննարկել է Խորհրդի սոցիալ-առողջապահական աշխատանքային խմբի 2002թ. 3-րդ եռամսյակի աշխատանքային պլանը՝ դրա կատարումը համարելով բավարար: Որոշվել է ՀՀ մանկապարտեզների դաստիարակների եւ դպրոցների ուսուցիչների առողջական քննության ու բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը նախատեսել պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության 2003թ. ծավալներում:

Քննարկվել է »Կանանց հանդեպ խտրականության բոլոր ձեւերի վերացման մասին« ՄԱԿ-ի կոնվենցիայի հետ ՀՀ-ում առկա իրավիճակի անհամապատասխանությունը: Առաջարկվել է ներկայացնել այս ոլորտում կատարված եւ նախատեսվող աշխատանքները, դրանցում ներգրավել Կանանց խորհրդի անդամներին եւ ՀՀ շահագրգիռ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին:

2002թ. դեկտեմբերին կայացած նիստը լսել է Խորհրդի աշխատանքային խմբերի 2002թ. հաշվետվությունները եւ հավանություն տվել կատարված աշխատանքներին: Որոշվել է 2003թ. մշակութային միջոցառումների ծրագրերի համար նախատեսված միջոցների հատկացնել »Կին-մշակույթ-խաղաղություն« հանրապետական փառատոնի

եզրափակիչ փուլի իրականացման համար: Նախատեսվել է ստեղծել »Հայ կին արվեստագետներ« ինտերնետային էջ եւ պատրաստել դրա համար անհրաժեշտ տեղեկատվական բանկ: Հանձնարարվել է ապահովել »Հայաստանի Հանրապետության կանանց վիճակի բարելավման եւ հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագիրը« մշակող միջգերատեսչական հանձնաժողովի գործունեության հրապարակայնությունը:

2003թ. փետրվարին տեղի ունեցած նիստը կազմակերպական հարցերի շրջանակներում որոշել է աշխատանքային խմբի ղեկավարներ ընտրել հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին, ստեղծել Խորհրդի »Գործարարությանն աջակցող« նոր աշխատանքային խումբ, »Սոցիալ-առողջապահական« աշխատանքային խումբը տրոհել երկու մասի՝ »Սոցիալական« եւ »Առողջապահական« եւ ներկայացնել 2003թ. աշխատանքային պլանները: Հանձնարարվել է »Հայաստանի Հանրապետության կանանց վիճակի բարելավման եւ հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագիրը« մշակող միջգերատեսչական հանձնաժողովի գործունեության հրապարակայնությունն ապահովող մեխանիզմներ առաջարկել: Հանձնարարվել է նաեւ կազմակերպել հանրակրթական դպրոցների 1-3-րդ դասարանների աշակերտներին փուլ առ փուլ սննդով ապահովումը՝ առաջին փուլում ընդգրկելով սահմանամերձ շրջանների, երկրորդում՝ բարձր լեռնային շրջանների եւ երրորդում՝ աղետի գոտու առաջին դասարանցիներին:

2003թ. ապրիլին կայացած նիստը կրկին անդրադարձել է աշխատանքային խմբերի պլաններին: Հանձնարարվել է աշխատանքային խմբի ղեկավարներին առաջարկություններ ներկայացնել, ամփոփել դրանք՝ նշելով ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները, կատարման կոնկրետ ժամկետները, ակնկալվող արդյունքները եւ ներկայացնել դրանք Խորհրդին:

2003թ. հուլիսին տեղի ունեցած նիստը քննարկել է աշխատանքային խմբերի պլանների նախագծերը եւ հիմնականում հավանություն տվել դրանց՝ առաջարկելով համապատասխան լրամշակումներ կատարել: Լսվել եւ ի գիտություն է ընդունվել »Հայաստանի Հանրապետության կանանց վիճակի բարելավման եւ հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագրի« մշակման ընթացքի մասին տրված տեղեկատվությունը:

2003թ. վերջին նիստը քննարկել է »Հայաստանի Հանրապետությունում 2004-2010թթ. կանանց վիճակի բարելավման եւ հասարակության մեջ նրանց դերի բարձրացման ազգային ծրագրի« նախագիծը: Հանձնարարվել է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությանը՝ ՀՀ ֆինանսների եւ էկոնոմիկայի նախարարության հետ մեկտեղ քննարկել ծարգրի համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափի, աղբյուրների եւ դրանց կատարման պատասխանատուների, ինչպես նաեւ աշխատանքներ տանել ծրագրի 2005-2007թթ. միջոցառումները ՀՀ կառավարության 2005-2007թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերում ներառելու հարցը: